ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 2

*հերթական համարը*

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

*ՀՀ Կոտայքի մարզի Նաիրի համայնքը (Պռոշյան բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ*

*(Նաիրի համայնքի (Պռոշյան բնակավայրի) գոտևորման նախագծի մասով)*

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝

*ՀՀ Կոտայքի մարզի Նաիրի համայնքը (Պռոշյան բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Կոտայք-4 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝*

| ՀՀ Կոտայքի մարզի Նաիրի համայնքի (Պռոշյան բնակավայրը)<br>Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը | Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը |
|---|---|
| 07-053-0324-0028 կադաստրային ծածկագրով 0.05459 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության /խաղող/ հողեր | 07-053-0324-0028 կադաստրային ծածկագրով 0.05459 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողեր |

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Անհրաժեշտ է կառուցապատման հետագա գործառույթներն իրականացնել հաշվի առնելով ՀՀ Կոտայքի մարզպետարանի կողմից նշված պահանջը՝ կառուցվող շենքերի և շինությունների սպասարկման համար անհրաժեշտ ենթակառուցվածքներն իրականացվեն բացառապես կառուցապատողի միջոցների հաշվին,

4. ՀՀ Կոտայքի մարզի Նաիրի համայնքապետին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Պռոշյան բնակավայրի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Կոտայքի մարզի Նաիրի համայնքի Պռոշյան բնակավայրի հաստատված գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

| | | |
|---|---|---|
| *Հանձնաժողովի նախագահ՝* | | |
| | | Ե.Վարդանյան |
| *Հանձնաժողովի քարտուղար՝*<br>*Ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի աշխատանքային պարտականությունները կատարող* | | |
| | | Լ.Սարգսյան |

Երևան, «10» «հունվարի» 2025 թ.